

ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱԽՉԱՎԱԼԻ ԻՐԱԿՈՒՄԸ ՔԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ԾՐՉԱՆ ԱՌԱՋԻՆ)

Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆԻ

(Շարունակութիւն ¹⁾)

V

Հայկազնց ժամանակ ծագած իրաւունքները, Ցաղթութեամբ կամ ուժով առած երկիրները, Երկրի և կալւածքի իրաւունքը, Հարկի ծառակութիւնը, իրաւունք գերիների վերաւ լուծ, Հայկազնց ցեղերի ներքին չարարերութիւնները, Ծառալութիւնը հպատակութիւնն է. Այդ իրաւունքների բացարութիւնը Արշակունեանց ժամանակ, Ծառալութեան տեսակները նոյն ժամանակամիջոցում. սեպհականութիւն, ստրուկ, սպասաւոր, գեղջուկ, Հայկազնց ժամանակ ծագած երեք տեսակ՝ տէրութեան, իշխանութեան և սեպհականութեան՝ իրաւունքները:

Ինչպէս տեսանք, Հայկազնց ծնունդները հէնց սկզբից ամեն մէկը որոշ երկիր էր բռնել. ցեղապետների կարգադրութեամբ դորանք իրար մէջ սահմաններ էին որոշել. Իրանց բռնած տեղերը իրանցն էին համարում և իբրև ժառանգութիւն այդ ունեցածը անցնում էր յետագայ սերունդներին:

¹⁾ Տես «Մուրճ» 1894 թ. № 1, 2 և 3.

Այդ ծնունդները հետզհետէ իրանք էլ նոր ցեղերի էին փոխում. զբանց մէջ լինում էին թէ հարազատ և թէ մերձաւոր ցեղեր; Ազնւականները, ցեղապետները և ծնունդների գլուխ կանգնածները հարազատներիցն էին: Երկիրը ժառանգելու իրաւունքը մնում էր թէ հարազատ և թէ մերձաւոր ցեղերի ձեռին: Բայց, բացի ժառանգութեան իրաւունքից, կար և կալւածքի իրաւունք: Հէնց առաջի քայլափոխում Հայկը հնազանդեցրեց տեղացոց, շինեց առուն բնակութեան կալւածոց» և այդ տեղերը աւաւ կադրուին: Արմենակի բնակութեան տեղն էլ նստած կային տեղացիք, և Արմենակը իր բռնած տեղը նոյնպէս կալւածք է անւանում:

Արժանի է ուշագրութեան, որ Հայկազունք միայն իրանց այս բռնած տեղերն էին կալւածք անւանում, ուր իրանցից առաջ բնակւած էին տեղացիք, կամ օտար ցեղի մարդիկ. և որովհետեւ ցեղերը հետեւում էին մէկը միւսի վերայ բռնանալու, յայնի բան է որ Հայկազունք էլ էին բռնանում այն տեղացոց վերայ, որոնք իրանց հնազանդւել էին և իրանց վերաբերեալ օտար էին. Հէնց այդ պատճառով զբանց բնակւած տեղը իրանց կալւածքն էին համարում: Թէ ինչ յարաբերութիւններ էին ծագում Հայկազանց և օտարածինների մէջ, երբ առաջինները բռնանում էին վերջինների երկրի վերայ, կը տեսնենք Խորենացու հնտեսեալ հատւածներից:

Արամի օրով, օրինակ, Մեղացի Նիւքարը... «զսահմանս Հայոց ծառայեցոց ամս երկուս... Արամ... զնիւքարն... ձերբակալ արարեալ... և զաշխարհն նորա... ի ծառայութեան հարկի կալաւ» (Խոր. եր. 96): Միւս տեղ ... «Բարշամ անուն՝ սաստկագոյն նեղեալ հարկաց խստութեամց՝ անապատ զբովանդակ շրջակայն իւր առնէր... Արամը սրան հալածում է...¹⁾ իսկ զմեծ մասն դաշտացն Ասորես-

¹⁾ Արամը պատահում է Հայաստանի սահմաններում մեղացի երիտասարդներին, որոնց առաջնորդում էր Նիւքար ոմն, Մարէս կոչմամբ—սա... երկու տարի ծառակեցրեց իրան մեր երկիրը: Արամը... գերի բռնելով նոյն Նիւքարին... իսկ նորա աշխարհը... հարկի տակ զրեց (40). նազոնում է իւր երկրի մի ապակամիչ, Բարշամ անունով... Սա իւր շրջակաւքը սաստիկ նեղացնելով իսխատ հարկերով, անապատ՝ էր դարձնում բոլոր աչն տեղերը... Արամը երկար ժամանակ հարկի տակ պահեց Ասորեսանի դաշտերի մեծ մասը (42). այսուղ զուրս է գալիս նորա (Արամին)

տանի կալաւ ի ծառայութիւն հարկի... Արամ բազում ժամանակս (Խոր. 47): Պատահէ նմա (Արամին) Պայապիս, որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց... զՊոնտուն և զՈվկիանուն Որում ի դիմի հատեալ վանէ... Եւ ինքն թողեալ զո՞մն Մշակ անուն յազգէ իւրմէ, և բիւր մի ի զօրաց իւրոց ի վերաց աշխարհին... Ընդ նմին օրինակի ի տեղեացն այնոցիկ մինչև ցբուն իւր սահմանն, զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որ երկրորդ և երբորդ անւանեցան Հայք, այլ և չորրորդ (Խոր. եր. 48, 49):

Այս օրինակներից երեսում է, որ երբ օտարն էր բռնանում հայոց սահմանների վերաց, նա հարկով էր ծառայեցնում, կամ նեղում այդ տեղի բնակիչներին կամ ժողովրդին:

Երբեմն այդպիսի հարկով նեղացնելը այն աստիճան խիստ էր լինում, որ այդպիսի տեղերը անապատ էին դառնում: Հաւանական է, որ այդպիսի տեղերում օտարը իր ուժի շափ տեղացիներից առնում էր նոցա կայքը, անունները և կարելի է մինչև անգամ զրանցից գերիներ էլ էր վերցնում: Հայերը նմանապէս բռնանալով օտարի երկրի վերաց, զրանց հարկի ծառայութեան տակ էին պահում: Սիսական և հաղմեան ցեղերը, որոնց Արամը յանձնել էր արեւելան և հարաւային նւաճած կողմերը, հաւանական է, որ այս եղանակով էին վարւում այն տեղերի օտարածինների հետ:

Երկրորդ և Չորրորդ Հայք անւանեալ տեղերի վերաց առաջ ուրիշներն էին բռնացած: Հայերը զրանց վանելով, դրանց տեղն են բռնում: Հայ բնակիչը կամ հայ շէնը ամայի տեղերումն է նստում, իսկ զօրքը կողմնապետի առաջնորդութեամբ մնում է այդ տեղերը պահպանելու: Խորենացին ցեղը և գունդը շատ տեղ չի զանազանում, վասն որոց գունդ, ցեղ և կամ զօրք մեր կարծիքով միենոյն նշանակութիւնը պիտի ունենացին: Ուրեմն զօրքը կամ ցեղի հարազատ մասը կողմնապետի առաջնորդութեամբ կալւածքի

առաջ պատերազմով... Պայապիս... որ տիրապետել էր սոն աշխարհին, երկու մեծամեծ ծովերի—Պոնտոսի և Ովկիանոսի—մէջ գտնւած բոլոր երկրին. Գալով սորա վերապ, Արամը քշում է Նորան (գէպի ասիական ծովի մի կողմին)... և թողնելով իւր ազգից մի ոմն Մշակ անունով 10,000 զօրքով այն աշխարհին վերակացու... Աք կերպով, անտեղից մինչև իւր բուն սահմանները, որոնք կոչւացան Երկրորդ, Երրորդ, Նաև Չորրորդ Հայք.

իրաւունք էր ձեռք բերում, բռնանալով նոր երկրի վերաց. իսկ իրանց շնչն էլ այդ ամազի տեղերը բռնելով՝ ժառանգում էր:

Հետեւապէս այդպիսի նոր տեղերի վերաց բռնանում էին Հայկազեաններից հարազատ ծագումն ունեցողները և, ինչպէս Կադմոսը և Արմենակը, այդպիսի տեղերը իրանց կալւածքն էին համարում:

Այլ էր լուծը: Ահա ինչ է գրում Խորենացին դորա մասին: Տիգրանը ... աւրանց կացեալ գլուխ, և արութիւն ցուցեալ, զազգս մեր բարձրացոյց. և զընդ լծով կացեալս՝ լծատերս և հարկապահն ջակ կացոց բազմաց (Խոր. եր. 75) լուծը հարկի ծառացութիւնը չէր: Հարկով ծառացեցնում էին օտար ցեղը, երբ նորա երկիրն էին գրաւում և իբրև ցերի չէին վերցնում նրանց: Բայց Տիգրանի ժամանակ մի ամբողջ ազգ և կամ ցեղ ցերի բերին: Յաղթողի յարաբերութիւնը դրանց վերաբերեալ այլ էր և, կարծես, լուծ խօսքով էր որոշում: Այդ գերութեան մասին մի թեթև գաղափար տալու համար, այստեղ առաջ կը բերենք Խորենացու հետեւեալ հատուածը: Ճիսկ զԱնոյշ զառաջին կինն Աշդահակաց և զբազումն ի սերմանէ Աշդահակաց աղջկունս՝ հանդերձ պատաննեկօք և այլ բազում գերեօք, որչափ թէ աւելի քան զբիւր մի, բնակեցուցանէ յարեւելեաց ուսոց մեծի լերինս՝ մինչև ի սահմանս Գողթան, որ են Տամբատ, Ոսկիողաց, Դաժգոյնք, և որ այլք առ եզերը գիտոյն դաստակերտք, յորոց մինն է Վրանջունիք, մինչև հանդէպ ամբոցին Նախճաւանու. և զերիս աւանսն զԽրամ և զՁուղաց և զԽոշակունիս: Իսկ ի միւս կողմանէ գեառյն զբոլոր դաշտն, որոյ գլուխն Աժդանական, մինչև ցնոյն ինքն ամուրն Նախճաւանաց (Խ. եր. 86, 87) ¹⁾ ալուծ» մեր լեզով նշանակում էր ծանր բռնութիւն, չարաշար

¹⁾ Իսկ Անողջին, Աժդահակի առաջին կնոջ և նորա ազգից ուրիշ շատ աղջիկներ պատանիներով և ուրիշ գերիներով, տասն հազարից աւելի, Տիգրանը բնակեցրեց մեծ սարի արևելեան կողմում մինչև Գողթնի սահմանները, այսինքն Տամբատի, Ոսկիողի, Դաժգոյնիքի մէջ, և գետի ափի մօս ուրիշ գիւղերի մէջ, որոնցից մինն է Վրանջունիք, մինչև Նախիջևան ամրոցը. Նոցա տալս է նովապէս երեք քաղաքներ, Խրամ, Զուղար և Խոշակունիք, իսկ գետի միւս կողմից տալս է բոլոր դաշտը, որը սկսում է Աժդահականից մինչև նոյն Նախիջևան ամրոցը. (Խ. ծ. վ. Եր. 73—74):

նեղութիւն և այլն և մինչև անգամ անասուններին էր վերաբերում: Յատնի բան է, յաղթողը կարող էր գերիներին աւելի խիստ և շարաշար նեղել և լուծի տակ պահել, քան թէ նրանց, որոնք թէն յաղթւած էին, բայց գերի չէին լնկած: Ասորիները յաղթեցին Հայերին և հաւանական է որ սրանց հարկի ծառայութեան տակ դրին և ոչ թէ լուծի, որովհետև հայերը շարունակում էին իրանց առաջնորդներով կամ նահապեաններով կառավարել: Արամը և Արան Նինոսից և Նամիրամից երկրորդական պատիւ ունէին ստացած: Սրայ Գեղացիկի որդի Արան՝ Նամիրամի կողմից կարգւած էր մեր աշխարհի վերակացու (Խ. 66). Անուշաւան մեր երկրի հարկը ժողովելով՝ կառավարելու իրաւունքն էր ստացել (Էջ 67) և այլն:

Այսու ամենայնիւ ասորիները, ինչպէս երևում է Վանայ արձանագրութիւններից, շատ էին նեղում հայերին, մինչ հայ ցեղապետները և առաջնորդները սրանց ժամանակ կառավարողներն էին: Պարոյրը, ինչպէս զիտենք, անկախութեան հասաւ և մեր նախարար էր անւանում:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ յաղթողը յաղթւածի երկրի, աշխարհի կամ սահմանների վրայ մի տեսակ երկրի կամ կալաածքի իրաւունք էր ստանում, որով հարկի ծառայութեան տակ էր պահում այդ յաղթւած ժողովրդին:

Բայց գերի բերած ժողովրդին լուծի, այսինքն շարաշար հարստահարութեանց, տակ էին սրահում:

Այսպէս վարւում էին Հայկազունք օտարների հետ, երբ դրանց յաղթում էին, դրանց երկրի վրայ կալւածքի իրաւունք էին ստանում, իսկ երբ գերի էին բերում, լուծի և ստրկութեան տակ էին սրահում:

Դասնանք և քննենք Հայկազանց ներքին կեանքը: «Յեղապետներին և զլուխ կանգնածներին վերաբերեալ միւս ցեղակիցները, կարելի է կարծել, հպատակներ էին: Տիգրանը, օրինակ, «յուղարկէ թագաւորապէս զբոյր իւր Տիգրանուհի մեծ ամբոխիւ ի Հայս, յաւանն զոր շինեաց իւրով անւամբ Տիգրան, որ է Տիգրանակերտ, և զգաւառն զանոսիկ ի ծառայութիւն նմա հրամայէ» (Խ. եր. 86): Ախասկը հօրից ստացաւ «ծառայա անձինս բազումս»: Ախասկը և Տիգրանուհին զլուխ կանգնեցան ոչ թէ յաղթւած, այլ իրանց ժո-

զովրդի վերայ, որը ծառայութեան պարտականութեամբ էր կապ-
ւած սրանց հետ: Նիւթերի սակաւութիւնը մեղ թոյլ չի տալիս
մանրամասն կերպով պարզել այդ յարաբերութիւնը Հայկազնաց
հարստութեան ժամանակ: Այս պատճառով հարկ ենք համարում
մի հայեացք ձգել թէ ինչ էին նշանակում «հարկի ծառայութիւնը»,
«ծառայութիւնը» և լուծը՝ Արշակունեաց ժամանակ: Կարծում ենք
այդ առարկաները աւելի կը պարզւեն, երբ կը քննենք դրանց յա-
ջորդող կերպարանափոխած աստիճանները և յետագայ եղածների
օգնութեամբ կը հետևենք նկարագրել այդ առարկան:

Արշակունեաց ժամանակ կար «ծառայութիւն», «ծառայութիւն»
վաստակի», «հարկի ծառայութիւն», «ատրկութեան ծառայութիւն»
«սպասաւորութիւն» և այլն: Ծառայութիւնը կամ վաստակի ծառայու-
թիւնը՝ համատակութիւնն էր: Այդպիսի ծառայութիւնը մի տեսակ
պաշտամունք էր, գլխաւորապէս կրտսերից մեծին, կամ թագաւո-
րին: Հետևեալ օրինակները կարող են աւելի պարզել այդ:

Աղձնեաց բգեշի Վաղինակ Սիւնին ...«հանդերձ աշխարհաւն
և ամենայն ուժովն կայր բգեշին Վաղինակ ի ծառայութիւն ար-
քային հանապազ» (Փ. եր. 19) ...«մի ոմն ի նախարարաց մեծամե-
ծացն, Մերուժան անուն Արծրունի... չոգաւ եկաց առաջի թագա-
ւորին պարսից Շասրոյ, և գներ ընդ նմա ուխտ երդմամբ, զի յաւի-
տեան ծառայ լիցի նմա» (Փ. եր. 118): Հայերը նեղանալով իրանց
թագաւորից ցանկանում էին Շապուհին ծառայել «զի ինա ձեռս
տացեն, և զնա պաշտեսցին և նմա միամտութնամբ ծառայեսցին և
տացեն նմա աշխարհս հայոց (203). Նախարարները գրում են Յազկեր-
տին՝ «և հարքն մեր և հաւքն հարցն մերոց կային ի ծառայութեան
վաստակս և սիրով կատարէին ամենայն հրաման բանին նորա և
յանց ժամանակաց մինչեւ քո հարենի աթոռոգ՝ և մենք զայն ծա-
ռայեցաք, բայց քեզ լաւագոյն բան դատաջնոյն» (Եղիշէ 84. 85):
Կոստանդինը թագաւորեցնում Խոսրովին և գրում՝ է՝ «մեզ ծառա-
յեսջիք միամտութեամբ» (Խորենացի երես 283): Ներսէսի ձեռքով
Արշակը պայման է կապում նախարարների հետ՝ «թագաւորն վա-
րեսցի ուղղութեամբ և նոքա ծառայեսցին միամտութեամբ» (Խո-
րենացի, երես 342): Այս օրինակներից մենք տեսնում ենք, որ ծա-
ռայութիւնը այն յարաբերութիւնն էր, որ ծագում էր աիրոջ և

Հպատակի մէջ: Ծառայութիւնը կարող էր լինել և յաւիտենական: Նախարարները, բղեշխները, իբրև հպատակներ, ծառաներ էին համարում: Ծառայութեանը կարելի էր ենթարկւել աշխարհով և ուժով: Հպատակի գլխաւոր պարտականութիւններից մէկն էր միամըսութեամբ ծառայելլը: Հպատակի պահանջն է, որ տէրը վարւի ուղղութեամբ: Օտար տէրերին ծառայելլը աւելի ծանր էր, մանաւանդ հեթանոսներին: Յունաց կայսրը գրում է պարսից թագաւորին «թէ կարասցես յաղթել նոցա և արկանել ի ծառայութիւն ես ի թիկոնս ոչ եկից նոցա»: Եապուհը գերելով երկիրը և յետ դառնալով ցերկրին հայոց ոսամիկանս և վերակացուս թողին ի ծառայութիւն մոռանել զմռացորդս երկրին»: Արշակը ցաւ համարեց ծառայել քրիստոնեաց թագաւորին «և ոչ յորվեց իշխել և մոռանել ընդ լծով հեթանոսաց» (Խ. 347): «Թող ծառայեսցուք թագաւորին յունաց, կայցուք ի հնագանդութեան իշխանութեան թագաւորին յունաց» (Փ. 127):

Սուրբ Ներսէսը պատասխանեց զանազան դասակարգերի ներկայ յացուցիչներին, որոնք ցանկութիւն յայտնեցին փոխանակ Արշակին, ծառայել պարսից թագաւորին թէ «Զի ամենեքեան դուք կեցեալ էք ցազգէտ Արշակունեաց, ոմանք ի ձէնջ գաւառատեարք լեալք ի նոցանէ և ոմանք մեծամեծ աշխարհաց, ոմանք աւագ աւանաց գեղից և գանձուց տեարք լեալ էք և պէսպէս դաստակերտաց, զի թէպէտ և առ արարիչն Աստւած յանցաւոր իցեն պիղծ ազգն Արշակունեաց, սակայն զձեղ կեցուցեալ զամենեսեան և յաղբօց թոթափեալ է, զան գործով, զան պատուիլ, զան իշխանութեամբ, զան գործակալութեամբ, և դուք... կամիք անկանել հեթանոսաց ի ծառայութիւնն... գուցէ բարկացեալ Տէր Աստւած ձեր, և խեցէ զձեղ արմատանի, և մատոնեսցէ զձեղ հեթանոսացն ի չար ծառայութեան, սորկութեան մինչև յաւիտեանս, և ոչ երբէք բարձրի լուծն ծառայութեան ի ձէնջ: Եւ բողոքէք դուք առ տէր, և նա ոչ լսիցէ ձեզ, վասն զի անձամբ անկաք դուք ի ծառայութիւն հեթանոս տէրանց և անաստւած անգէտ մարդկան» (Փ. 137, 138): Օտար տէրերին ծառայելլը նկարագրում է մութ գոյներով և կարող է գառնալ մինչև անդամ լուծ: Օտարը ստիպմամբ է ծառայութեան տակ ձում: Նախարարները գլեցին Յազկերտին թէ՝ «սիրով

Էինք կատարում քո ամեն հրամաններգ և վասոակի ծառայութեան տակ էինք։ Սուրբ ներսէսը ասում էր, որ Արշակունեաց ծառացելով մերոնք պատուի, իշխանութեան գործակալութեան և այլ իրաւունք-ների էին արժանացել, բայց փոխելով այդ ծառայութիւնը՝ կարող են ընկնել նեթանոսաց չար սորկութեան ծառայութեան տակ։

Ասածներիցս մենք տեսնում ենք, որ ծառայութիւնը գլխաւորագէս տիրոջ և հպատակի մտքով է հասկաց-ւում, միայն թէ եթէ տէրը օտարն է՝ այդ տեսակ ծառայութիւնը կարող է մինչև անգամ փոխարկ-ւել չար սորկութեան ծառայութեան. ծառան կամ հպատակը հողի, կալւածքի, սեպհականութեան իրա-ւունքից զուրկ չէր։ Նա մինչև անգամ կարող էր, նախարար, բգեշխ և ազատ դասակարգի մարդ լինել։

Բայց այլ էր սպասաւորութեան ծառայութիւնը, ուր մարդը, ինչպէս կը տեսնենք, իր հողով, կայքով և անձնաւորութեամբ պատկանելիք էր տիրոջը։ Այլ էր ևս հարկի ծառայութիւնը։ Այդ դէպում, ուղիղ է, ծառան զրկւած չէր իւր հողից, կայքից և այլն, նաև դորա անձնաւորութիւնը պատկանելութեան առարկաց չէր, բայց դա ենթարկւած էր տիրոջ կամայականութեան. հարկով ծառայեցնում էին այն երկիրները, որոնք սրով էին գրաււած, կամ գրաււած էին յօժարութեամբ և այլն։

Վերջին Արշակունիների ժամանակ երկիրները կարող էին լի-նել «քսակագին», «զարգեական» և «հայրենիք»։ Երկրի տէրը ժո-ղովրդից կարող էր առնել պաղի տասանորդ, մուտ, ոռճիկ և այլ տեսակ հարկեր, և այդ տեսակ յարաբերութիւնները հարկի ծա-ռայութիւններ էին անւանւում։ Ուր ժողովուրդը հարկի ծառայութիւնների էին անւանւում։ Սի օրինակ բերելով այստեղ կը բաւականանք։ «Հարկանէր և յԱնգեղ տունն զբազումս և հանէր ընդ սուր, բայց աշխարհն զի ոստան արքունի լեալ էր վաղ, բնակիչք գաւառին և ինքեանք կային ի հարկի ծառայութեան» (Փ. 177)։

Ուրեմն ծառայութիւն նշանակում էր հպատա-կութիւն։ երբ այդ հպատակութիւնը օտար տիրոջն էր վերաբերում՝ վաստակի ծառայութիւն էին ասում

այդ: Երբ տէրը յաղթութեամբ էր ձեռք բերել իր հպատակի երկիրը և կամ այդ երկիրը պարգևական և քսակագին և կամ հայրենիքն էր, նա ունենում էր և իրերի իրաւունք. իսկ ժողովուրդը հարկի ծառայութեամբ էր պարտաւորւում:

Աւելի վատթար էր ստրկութեան ծառայութիւնը. այս ծառայութիւնը լծադիր է դարձնում մարդուն: Սպասաւորութեան ծառայութեան մէջ մարդը իւր կայքով, ունեցածով, հողով և անձամբ պատկանելիք էր:

Մի սովորական երեսիթ էր Հին-Հայաստանում ունենալ մարդու վերայ սեպհականութեան իրաւունք: Մարդու կեանքը, նորաընտանիքը, կայքը և այլն կարող էին պատկանել միւսին: Ահա և միքանի օրինակներ: Արշամը տալիս է Հերովդին խնդրած գործաւորները՝ հազարաւոր արհեստաւորներ (Խ. 196): Պակարոսը Խշտունեաց նահապետ Պարզափրանին «իսոստանաց հինգ հարիւր կին գեղեցիկ և հազար քանքար ոսկւոյ» (Խ. 135), եթէ վերջինս նորան օդնի իր նպատակին հասնելու համար: Աղւանից թագաւորը «ինդրեաց զմանկականն սեպհականն, զոր հօր իւրոյ շնորհեալ էր նմա ի տղայութեան 1000 երդ, առ զայն ի թագաւորէն և նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ» (Էջ 402):

Տրդատը հրամանագրում է, որ եթէ մէկը չերկրպագի մեհենաց և առուն և կեանք և արարք և առացւածք և գանձք այնուիկ լիցի, որ զայնոսիկ ի մէջ ածցէ» (Ագ. 35):

Հէնց այստեղից մէնք տեսնում ենք, որ զանազան պատճառներից էր կարող մարդու անձնաւորութիւնը պատկանելութեան առարկայ գառնալ: Մարդու կարող էին պարզելու և տալ: Յանցանքների պատճառով դորան կարող էին պատկանելութեան առարկայ շինել և այլն: Գլխաւորապէս այդ տեսակ սեպհականութեան իրաւունքը առաջ էր գալիս գերի բերելու սովորութիւնից: Գերութիւնը մի սովորական երեսիթ էր թէ Հայկազանց ժամանակ և թէ ևս առաւել Արշակունեանց ժամանակ:

Կոիւները հէնց կարծես զերի առնելու համար էին մղում: Կոիւների ժամանակ աւերում էին մէկը միւսի երկիրը. կոտո-

ըում էին՝ գլխաւոր չափահաս արանց, իսկ մնացածներին, ում կարող մնում էին, գերի էին տանում իրանց աշխարհը:

Մուշեղը, օրինակ, «զամենայն երկիրն գաւառացն Ասրպատճան աւերէր, և առնոյր գերէր բազում գերութիւն». Կոյնը նա անում էր նուշերական աշխարհում, որպէս և Կորդւաց, Տմորեաց, Մարաց երկիրներում, Արցախում, Աղւանքում, Կազբից, Վրաց երկիրներում և Աղձնիքում (Փ. 175—178). «Զայր ի չափ հասեալ առհասարակ կոտրին, և զայլ ամենայն ի գերութիւն վարէին (Փ. 48): Տիգրան զգերութիւն Հրէից նստուցեալ ի յԱրմաւիր և ի յաւանին Վարդպիսի» (Խ. 131): Թագաւորները թէ իրանց էին յատկացնում գերիներին և թէ լնձայում էին վաստակաւոր և պատերազմներում քաջութիւն ցոյց տող մարդկանց:

Տրդատը, օրինակ, մասն էր հանում պատերազմից բերած աւարներից. «Նաև 1/5 ևս հանէր յամենայն մեծամեծ աւարացն, և մեծամեծ պարզե քրմացն շնորհէր» (Ազ. 27): Արտաշէսը Երուազից դերի բերած ծառաներին պարզեում է Սմբատին: «Եւ ապա աւար առեալ զգանձմն Երուազայ և զծառալս անձինս 500—բերէ Արտաշիսի: Եւ Արտաշէս պարզեէ Սմբատայ զծառալսն Երուազայ» (Խ. 185): Այսպիսով գերիները դառնում էին թէ թագաւորի և թէ մասնաւորաց սեպհականութիւնն: Գերիների նստելու տեղը՝ գիւղ, դաստակերտ և ձեռակերտ էր անւանւում: Մարաց գերութիւնը Տիգրանը գլխաւորապէս նստացրեց դաստակերտներում: Սմբատը Երուազից գերի բերածներին նստացնում է Բագարան անւանեալ ձեռակերտում: «Յայնժամ Սմբատայ զծառալսն Երուազայ զոր գերեացն ի Բագիրանէ, տարեալ բնակեցուցանէ... ի նոյն անուն Բագարան կոչեցեալ զձեռակերտն» (Խ. 186): Վարդգէսի աւանին վերայ գիւղ անունը աւելացաւ, երբ այդտեղ նստացրին Հրէից գերութիւնը: «Այս Երուանդ... զորոյ զքոյըն կին առեալ Վարդգէսի, շինեաց զաւանս զայս, յորում և Տիգրան միջին յԱրշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութիւն Հրէից, որ եղեւ բաղաքագիւղ վաճառը» (Խ. 205):

Քննելով այս առարկան, կը տեսնենք, որ հէնց գեղերը և դաստակերտներ եկեղեցուն, նախարարիներն էին, թագաւորին և այլոց էին պատկանում: Յայտնի բան է, որ այդ տեսակ սեպհականու-

թիւնը ծագում էր մարդու վերաց ունեցած սեպհականութիւնից Վահնունիք Երակլի պատկերը տարան «ի Տարոն, իւր եանց սեպհական գիւղն Աշտիշատ (Խ. 123). և ցասուցեալ ընդ Վահունիսն թէ ընդէր յիւրեանց սեպհականքն իշխեցին կանգնեցին զպատկերն ընկենու (Տիգրանը) զնա ի քրմութենէ, և զգիւղն յարԵրակլի... ընկենու (Տիգրանը) զնա ի քրմութենէ, և զգիւղն յար-Քունիս առնու, յորում պատկերին կանգնեցան» (Խ. 123): Խոս-րովը «Ետ զբուն գահոյից գեղն նահապետի Մանավազենից, եպիս-կոպոսին Աղբիանոսի, զՄանավազակերտ ամենայն սահմանօքն և գա-ւառակաւ հանդերձ» (Փ. 9): Դասիէլ քորեպիսկոպոսին նախարար-ները գտան «ի գիւղն եկեղեցւոյ ի Թելն» (Փ. 33): Դղակ մարդպետը գալիս է «ի մեծ ի գիւղն ընջին (?) արքունի, որում Արդեանսն կոչին» (Փ. 171): Ամասունիք «պատուին Արտաշիսէ գիւղիւք և դաս-տակերտօք» (Խ. 201): Տիրանը տալիս է Գնէլին «զկալւածս գիւղից և դաստակերտաց» (Խ. 308): Տրդատը տալիս է Մամդունին «ցաւի-տենական իշխանութեամբ զգիւղս և զդաստակերտս և զամենայն իշխանութիւն ազգին Սլկունեաց» (Խ. 249):

Ուրեմն մենք տեսնում ենք, որ գեղերը, դաստակերտները իբրև սեպհականութիւն, կալւածք՝ յաւիտենական պատկանելիք էին հա-մարւում: Գիւղերը և դաստակերտները գետնով, սահմանով և սպա-սաւորներով պատկանելութեան առարկայ էին դառնում: Տրդատը, օրինակ, նւիրում է եկեղեցաւն «զգեօղն» (Թորդան) ամենայն դաս-տակերտօքն և գետնովքն հանդերձ սահմանօքն» (Ագ. 356): «Եւ զդաստակերտն և զպասաւորն քրմովին հանդերձ և նոցին գետ-նովքն և սահմանօք ի ծառայութիւն նւիրեցին եկեղեցւոյ սպասա-ւորութեան» (Ագ. 454):

Միւս կողմից մենք տեսնում ենք, որ ոչ միայն գեղջուկը այլ և սպասաւորները դասակարգ էին կազմում: Օրինակ, Վասակ սպա-րապետը իւղեց «զթագաւորն Արշակ յամուր տեղւոջ ուրեմն յերկ-րին Մարաց, հանդերձ սպասաւորօքն» (Փ. 126.) և այլն: Բայց հա-ւանական է, որ դոքա միենոյն դասակարգի մարդիկ էին: Եղիշէն գեղջուկը վշտացեալ է նկարում: «ոչ երեկը աւելի տէր քան զծա-ռայ և ոչ ազատ փափկացեալ, քան զգեղջուկ վշտացեալ» (Եղ. 130. 131): Վալորշակը «Համան տայ քաղաքացեաց մարդկան արգոյ և պատիւ լինել քան զգեղջկաց, և գեղջկաց պատւել զքաղաքացիս

որպէս զիշխանաւ (Խ. 117): Ուրեմն գեղջուկը վշտացեալ է, դորա գետինը իրան չէ. դա պարտաւոր է պատուել քաղաքացուն իշխանի տեղ և այլն: Անտարակոյս գիւղացիք սեպհականութիւն էին եկեղեցու, նախարարների, թագաւորների և այլն: Սորանք գերիներից էին ծագում: Հաւանական է, որ սորանց վրայ տէրը կեանքի և մահու իրաւունք էլ ունենար: Կարելի է կարծել, որ բերած գերիները սկզբում ստրկութեան կարգումն էին պահում: Թովմայ Արծրունին ասում է, որ Տիգրանը գերի է բերում Աժդահակի որդիերանցը և կացուցանում է փ կարդի ստրկութեան: Սոքա զփոյթ հպատակութիւն ցուցեալ, կարգէ ի գործ ծառայութեան և յետոյ առաջացնում է մինչև փ գահ նախարարութեան»: (Թովմ. Արծ. 38):

Ձենք սիսալւիլ, հիմնւելով վերոյիշեաների վերայ, ասել որ գերիները՝ նաև ստրուկ, սպասաւոր և գեղջուկ անունն էին ստանում և ամենավատթար դրութեան մէջ էին Հին-Հայաստանում: Մեծ բարեպաշտութիւն էր համարւում զերիներ ազատել, դրանց զերեդարձ անել և այլն: Սուրբն Ներսէս, օրինակ, «բազում նեղելոց և տառապելոց գերեաց փրկութիւն և գերեկդարձ առնէր, զորս ահիւ քարոզութեան փառացն Քրիստոսի զկէս և զայսն գնովք փրկանօք ազատէր և յիւրաքանչիւր տեղիս դարձուցանէր» (Փ. 65). Յակովը եպիսկոպոսը հետևում է համոզիլ Մանաճիհր Ռշտունուն ազատել գերի առաջ ռամիկներին, սա ևս առաւել չարանում է և հրամայում է՝ ծով նետել ութ գերի առած սարկաւագներին (Փ. (285): Այժմս մեզ հասկանալի կը լինի Հայկազեանց ժամանակ ծագած իրաւունքները:

Մենք տեսանք, որ երկիրը ժառանգելու իրաւունքը պատկանում էր թէ հարազատ և թէ մերձաւոր ցեղերին: Միայն Հայկազեաններից հարազատ ծագումն ունեցողները յաղթւածի երկրի, աշխարհի կամ սահմանների վրայ մի տեսակ երկրի կամ կալւածքի իրաւունք էին ստանում: որով հարկի ծառայութեան տակ էին պահում յաղթւած ժաղովրդին: Արշակունեաց ժամանակ էլ, ուր ժողովուրդը հարկի ծառայութեան տոկ էր, նորա երկիրն էլ տիրոջն էր համարւում: և այս իրաւունքը դարգանալով՝ վերջին Արշակունեանց ժամանակ երկիրները լինում էին հայրենիք, պարզեւուկան և քսակագին և երկրատէրը որոշ տեսակի հարկ էր առնում:

ժողովրդից, այսինքն՝ նորան հարկի ծառայութեան տակ էր պահում։ Շնչնը կամ կլանը և մերձաւոր ցեղերը զուրկ էին այս իրաւոնքից։ Ընդհակառակը շնչնը մինչև անդամ ցեղից հարազատ ծագումն ունեցողների ձեռաց (այսինքն առաջնորդութեան) տակ էր։ Շնչնը, մերձաւոր ցեղ էլ դառնալով, միայն իր ժառանգած երկրի և ոչ թէ յաղթւածի երկրի վրայ էր իր իրաւոնքը պահպանում։ Թէ մերձաւոր ցեղերը և թէ հարազատ ցեղերը և ծնունդները ունեին իրանց առաջնորդները, զլուխ կանգնածները։ և Հայկազանց ներքին կեանքի մէջ կար մի տեսակ տիրոջ և ծառայի կամ տիրոջ և հպատակի իրաւունքը։ Արշակունեանց ժամանակ էլ ծառայութիւնը այն յարաբերութիւնն էր որը ծագում էր տիրոջ և հպատակի մէջ։ Նախարարները, բղեշները և իշխանները, իբրև հպատակներ, թագաւորի ծառաներ էին համարւում, մինչև անգամ ամենայն աշխարհով և ուժով։ Մառան զուրկ չէր կալւածքի և սեպհականութեան իրաւոնքից։ Մօտաւորապէս և Հայկազանց ներքին յարաբերութիւնները միմեանց հետ այդ տեսակ էր։ Այլ էր լուծը։ Գերի բերած ժողովուրդը Հայկազոնք լուծի, այսինքն չարաչար հարստահարութեանց, տակ էին պահում։ Այդ տեսակ մարդը տիրոջ սեպհականութիւնն էր։ Արշակունեանց ժամանակ էլ կային պատկանելի մարդիկ, որոնց ստրկութեան և սպասաւորութեան տակ էին պահում։

Դրանց կեանքի և մահու և հողային իրաւոնքը իրանց տիրոջն էր պատկանում։ Այդ վշտացեալ մարդիկը, որոնք պարտաւորէին քաղաքացիներին իշխանների տեղ ընդունել, քաղաքական աշխարհում ոչ մի դեր չէին կատարում և սորուկ, սպասաւոր և գեղջուկ անուններով էին յայտնի։ Հետևապէս, Հայկազանց ժամանակ երեք տեսակ իրաւունք էր առաջ եկել։ Նախ տիրոջ իրաւոնքը իր ծառայի կամ հպատակի վրայ։ Տիգրանուհին գաւառը ստանալով ի ծառայութիւն, այդ գաւառի ժողովրդի վրայ ունէր տիրոջ իրաւոնք։ Այս տեսակ իրաւունքը մեր մատենազիրները տէ րութեան իրաւունք են անւանում։ Հպատակները կամ ծառաները զուրկ չէին կալւածքի և սեպհականութեան իրաւունք վայելուց։

Կալւածքի կամ իրերի վրայ իրաւունք վայելով կարող էր այդ երկրի ժողովրդը հարկի ծառայութեան տակ պահել։ Բայց ժողովուրդը այդանու գերի, ստրուկ, սպասաւոր և գեղ-

ջուկ չէր. և տէրը դրանց վրայ կեանքի և մահու կամ դրանց հողի վրայ իրաւունք չունէր։ Այդաեղ տէրը կարող էր ժողովրդից որոշ տեսակների հարկեր առնել։ Սա իշխանութեան իրաւունք էր։

Վերջապէս կար լուծը։ Գերիները ամբողջ ցեղերի սեպհականութիւնն էին։ Բայց Հայկազանց ժամանակ գիւղերը և դաստակերտները արդէն մասնաւորների պատկանելիութիւն դարձած ենք տեսնում։ վասնորոյ կար գեղջուկը և սպասաւորը, այսինքն իրաւագուրկ և տէրերին պատկանելի մարդիկը։ Սրանք տէրերի սեպհականութիւնն էին։

Ահա Հայկազանց ժամանակ ծագած տէրութեան, իշխանութեան և սեպհականութեան իրաւունքները։

բնակութան գման զամ զամ դո
ուշիմ ու ան զամ զար զամ
բնակութան զամ մի դո զամ
(Վերջը բաջորդ համարում)

իսարդուն մի մարդ դո մարդ
մարդուն զամ սպաս դո զամ
մարդուն զամ հաջ մարդ մարդ
մարդուն զամ ան պարագան

մասնաւոր զամ ան պարագան
մասնաւոր զամ ան պարագան